**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.1/41782-2019**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-254-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1236 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-254-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-254-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածն անընդունելի է, քանի որ, համաձայն Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի, պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառավերականգնման հատումների իրականացումը, իսկ համաձայն 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հատուկ նշանակության անտառներում սահմանափակվում և արգելվում են անտառօգտագործման այն ձևերը, որոնք չեն համապատասխանում այդ տարածքների պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ռեժիմին:

2. Նախագծի 2-րդ հոդվածն ընդունելի չէ, քանի որ լուսավորման, մաքրման, նոսրացման և անցումային հատումներն իրենցից ներկայացնում են խնամքի հատման հիմնական տեսակները և իրականացվում են՝ արտադրական, պաշտպանական և հատուկ նշանակության (բացառությամբ պետական արգելոցների) անտառներում:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշման 89.1-ին կետի՝ ներկայումս Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակում: Նախարարության կողմից մշակված նախագծում Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի մի շարք հոդվածներ փոփոխվել են,

մի մասն էլ ուժը կորցրած է ճանաչվել:

Նախարարության կողմից շրջանառվող նախագծում նախատեսվում է օգտագործել «խնամքի հատում» եզրույթը, չնայած նրան, որ այն հանդիսանում է միջանկյալ հատման տեսակ:

Նախարարության կողմից մշակվող նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող Անտառային օրենսգրքի գործող հոդվածը թողնել անփոփոխ և, ըստ անհրաժեշտության, նախագծի դրույթներին անդրադառնալ առաջիկայում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում:

3 սեպտեմբերի 2019 թվականի N 1236 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վարդան Մելիքյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-254-13.08.2019-ՏՏԳԲ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 3
Երևան

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-254-13.08.2019-ՏՏԳԲ-011/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-211-Ն անտառային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 33-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«անտառավերականգնման կամավոր ընտրողական հատումներ՝ պաշտպանական կամ հատուկ նշանակության անտառներում հատման են նշանակվում հասուն, գերհասուն, վնասված, հիվանդություններով ու վնասատուներից վարակված, բնական վերաճին խանգարող ծառերը»:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 3-րդ հոդվածի 33-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝

«անտառավերականգնման միջանկյալ հատումներ՝ լուսատվության, մաքրման, նոսրացման եւ անցումնային (միջանցիկ), որոնք կատարվում են բացառապես արտադրական նշանակության անտառներում կամ մատղաշ եւ միջահասակ անտառտնկարկներում» :

***Հոդված 3.*** Օրենսգրքի 3-րդ հոդվածի 36-րդ պարբերությունում՝

«խնամքի» բառից հետո հանել՝ «(միջանկյալ)» բառը

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հիմնավորում**

**Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի անհրաժեշտությունը**

Առաջնահերթ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության անտառները հիմնականում լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության անտառներ են, որոնք ունեն հողապաշտպան, դաշտապաշտպան, ջրապաշտպան, ջրակարգավորիչ, հակասելավային եւ հակասողանքային, քամապաշտպան, առողջապահական եւ այլ նշանակություն, ինչպես նաեւ ստրատեգիական գերակա նշանակություն՝ հանդիսանալով էներգիայի աղբյուր:

Վերջին 25 տարվա ոչ արդյունավետ տնտեսական գործունեության եւ գերշահագործման հետեւանքով ընկել է ՀՀ անտառների արտադրողականությունը, պաշտպանական ունակությունը եւ ավելացել են հողերի էռոզիայի ենթարկվելու դեպքերը:

Նախագծով առաջարկվող փոփոխությունների եւ լրացումների հիմնական նպատակն այս պահին գործող ՀՀ Անտառային օրենսգրքի Հոդված 3-ում սահմանված՝ «անտառավերականգնման հատումներ» հասկացության իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան հստակ ձեւակերպումն է: Հարցը կայանում է հետեւյալում, որ «անտառավերականգնման հատումներ» հասկացությունը պետք է սահմանվի բավարար աստիճանի հստակ, որպեսզի՝ արտադրական, պաշտպանական եւ հատուկ նշանակության անտառներում բնափայտի մթերման նպատակով հատումներ իրականացնելիս, իրավական

նորմերի կիրառման դեպքում տարընթերցումներ կամ անորոշություններ չառաջանան: Այս օրինագծով հստակ տարանջատվում է՝ անտառավերականգնման կամավոր ընտրողական, անտառավերականգնման միջանկյալ եւ խնամքի հատումների տեսակները՝ անտառների նպատակային նշանակությանը համապատասխան: Առաջարկվող օրենքի կիրառելիության ազդեցության գնահատականը հետեւյալն է՝

- հատումները կպլանավորվեն եւ կիրականացվեն անտառների նպատակային նշանակությանը համապատասխան

- անտառներում բնափայտի ծավալների հաշվարկման եւ մթերման աշխատանքների նկատմամբ պատկան մարմինների կողմից վերահսկողական գործառույթներ իրականացնելիս՝ իրավական նորմերի պահանջների կատարման օրինականության եւ արդյունավետության գնահատականը կլինի հստակ եւ որոշակի

- այս պահին գործող օրենքում առկա տարընթերցումները եւ անորոշությունները կչեզոքացվեն, մասնավորապես՝ «անտառավերականգնման հատումներ» եւ «խնամքի (միջանկյալ) հատումներ» հասկացությունների մասով, ինչն էլ կնպաստի ՝ անտառների շահագործման, պահպանման եւ պաշտպանության գործառույթներն մասնագիտական տեսանկյունից իրականացնել ավելի արդյունավետ՝ ոլորտը կարգավորող իրավական նորմերի պահանջներին համապատասխան:

Բերենք վերոնշյալ ոչ հստակ ձեւակերպումներից բխող տարընթերցման մեկ օրինակ՝

ՀՀ Կառավարության՝ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 8 նոյեմբերի 2007 թվականի N 1316-Ն որոշմամբ սահմանվում է, որ պաշտպանական նշանակության անտառներում իրականացվում են միայն միջանկյալ (խնամքի) եւ սանիտարական հատումներ:

Հարկ է նշել, որ Անտառային օրենսգրքի Հոդված 3-ում սահմանվում են օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որտեղ «միջանկյալ (խնամքի)» հատումներ ձեւակերպմամբ հասկացություն չկա, այլ փոխարենը՝ խնամքի (միջանկյալ) հատումներ ձեւակերպումն է: Այստեղ «միջանկյալ (խնամքի)» եզրույթը (որն իրականացվում է 4 փուլով՝ լուսավորության, մաքրման, նոսրացման եւ անցումային հատումներով՝ որոնք կատարվում են արտադրական նշանակության անտառներում եւ անտառտնկարկներում) տարընթերցման պատճառ է դառնում, քանի որ դա արտադրական նշանակության անտառներում՝ անտառավերականգնման հատումներին է վերաբերվում (արտադրական նշանակության անտառներն են՝ բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները) եւ կիրառելի չէ պաշտպանական նշանակության անտառներում: Անհրաժեշտ է նշել, որ այս անորոշ ձեւակերպումների արդյունքում, առ այսօր, Հայաստանի անտառները լինելով լեռնային, որն անհերքելի փաստ է՝ իրականացվել են անտառավերականգնման «միջանկյալ (խնամքի)» հատումներ, որոնք կիրառելի են բացառապես արտադրական նշանակության անտառներում:

Միջանկյալ(խնամքի) հատումները բնորոշ լինելով արտադրական նշանականության անտառավերականգնման հատումներին՝ տարընթերցումների տեղիք է տալիս: Անտառվերականգնման միջանկյալ հատումները լինում են՝ խնամքի, սանիտարական եւ հատուկ նշանակության: Եվ արդյունքում ստացվում է, որ առ այսօր ունենք նաեւ խնամքի հատումներ, որոնք կարող են իրականացվել պաշտպանական եւ հատուկ նշանակության անտառներում՝ գործող Օրենսգրքի 3-րդ հոդվածում սահմանված խնամքի հատումներին համապատասխան, այն է՝ ծառուտում գլխավոր անտառատեսակ կազմող ծառատեսակի աճին խոչընդոտող դանդաղաճ ծառերի պարբերաբար հեռացում: Սակայն իրավակիրառ պրակտիկայում՝ խնամքի հատումները լինելով նաեւ վերոնշյալ անտառվերականգնման միջանկյալ հատումների եղանակներից մեկը՝ հատումների իր 4 փուլերով՝ լուսատվության, մաքրման, նոսրացման եւ

անցումնային (միջանցիկ ), որը կիրառելի է բացառապես արտադրական նշանակության անտառներում, օրենսդրական բացի եւ տարընթերցումների պատճառով առ այսօր այդպիսի հատումները կիրառվել եւ իրականացվել են Հայաստանի լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության անտառներում

Համապատասխան մասնագետների հետ՝ «միջանկյալ (խնամքի)» եւ «խնամքի (միջանկյալ)» հատումներ հասկացությունների մասնագիտական կիրառելիության վերաբերյալ կատարվել են քննարկումներ, վերլուծություններ, որոնց արդյունքում եզրակացությունն եղել է հետեւյալը՝ անհամատեղելի, անորոշ, ոչ մասնագիտական ձեւակերպումներ են եւ անհրաժեշտ է տարանջատել ըստ անտառների նպատակային նշանակության՝ համապատասխան մասնագիտական հստակ ձեւակերպումներով, որն էլ առաջարկվում է կատարել ներկայացվող օրենքի նախագծով:

**Ակնկալվող արդյունքը**

Օրենսգրքի 3-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները եւ լրացումները հնարավորինս կբացառեն Հայաստանի լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության, վայրի, բնական անտառների՝ մասնագիտական տեսանկյունից չհիմնավորված, ոչ արդյունավետ եւ իր նշանակությանը ոչ համապատասխան շահագործումը:

Օրենքի ընդունումը պետական բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի նախատեսում